# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի օգոստոսի 10-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի սեպտեմբերի 05-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՄՈՒԼՏԻ ԼԵՈՆ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի սեպտեմբերի 05-ին կատարված փոփոխությունների արդյունքում հստակեցվել է ապրանքի գնման ժամանակացույցը և հաստատվել է դրա ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 05-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2023 թվականի օգոստոսի 10-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/25-1 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ**